Արձանագրության 3

Երևան քաղաքի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի շրջակա տարածքի ոռոգման ցանցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման « ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/117» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

04.09.2019թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մարտիրոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Մատասյան/գնահատող/, Բ. Տեր-Թովմասյան /գնահատող/, Լ. Գևորգյան /բացող/, Ս. Գևորգյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Ա. Մարտիրոսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություն, իսկ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերի պահանջներին:

1.2 Ծանուցվել էր 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Մարտիրոսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Երևաննախագիծ» ՓԲԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

3. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/117 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Մարտիրոսյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/117» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել

«Երևաննախագիծ» ՓԲԸ-ին և վերջինիս ներկայացնել **Երևան քաղաքի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի շրջակա տարածքի ոռոգման ցանցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների** կատարման պայմանագիր կնքելու առաջարկ,

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա. Մարտիրոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:25-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Մարտիրոսյան

Անդամներ՝ ---------- Ե. Մատասյան

---------- Ս. Գևորգյան

---------- Լ. Գևորգյան

---------- Բ. Տեր-Թովմասյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան